



Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) ֆինանսատնտեսագիտական վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, Հայաստանի Հանրապետության Կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով և սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի (այսուհետ՝ Նախարարի) հրամաններով:

3. Վարչության կանոնադրությունը, կառուցվածքը հաստատում (փոփոխում) է Նախարարը:

4. Վարչությունը ղեկավարում է վարչության պետը:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Վարչության խնդիրներն են.

1) կազմակերպել և ապահովել մշակույթի ոլորտի (այսուհետ՝ Ոլորտ) ֆինանսավորումը, հաշվապահական հաշվառման, գանձապետական սպասարկման, վիճակագրական, հարկային, սոցիալական ապահովագրության հաշվետվությունների հետ կապված աշխատանքների իրականացումը,

2) սահմանել Ոլորտում տնտեսական բարեփոխումների ուղղություններն ու ապահովել դրանց իրականացումը,

3) բարելավել Ոլորտի կառավարման սկզբունքները, աշխատանքների իրականացման ձևերը ու կարգերը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Վարչությունն իր խնդիրներին համապատասխան իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իրականացնում է Ոլորտի բյուջետային ֆինանսավորումը, հաշվապահական հաշվառման վարումը, գանձապետական համակարգով սպասարկումը.

2) ապահովում է օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան մարմիններ եռամսյակային և տարեկան հաշվետվությունների ներկայացումը.

3) Ոլորտի մասով ապահովում է վարչության աջակցությունը և օժանդակությունը Աշխատակազմի ստորաբաժանումներին և Նախարարության ենթակայության կազմակերպություններին, նպատակային պետական ծրագրերի և առանձին միջոցառումների ֆինանսավորման իրականացման աշխատանքներին.

4) Նախապատրաստում է Նախարարության կողմից համապատասխան մարմիններին և կազմակերպություններին ներկայացվող Ոլորտին վերաբերվող զեկուցումների, առաջարկությունների և այլ փաստաթղթերի նախագծերը.

5) Ոլորտի մասով իր իրավասությունների սահմաններում ապահովում է մշակույթի բնագավառի հատուկ նպատակներով ստեղծված, միջգերատեսչական, Նախարարին կից գործող և այլ խորհուրդների ու հանձնաժողովների աշխատանքը, առանձին հարցերի վերաբերյալ Ոլորտի մասով մասնագիտական եզրակացությունների նախապատրաստումը.

6) Նախարարի հանձնարարությամբ Ոլորտի մասով կազմակերպում է Նախարարության համագործակցությունը Հայաստանի Հանրապետության օրենսդիր և գործադիր մարմինների, իսկ Աշխատակազմի ղեկավարի հանձնարարությամբ՝ գաճապետական համակարգի, բանկերի, հարկային ու վիճակագրական մարմինների, սոցիալական ապահովագրության հիմնադրամի ու այլ կազմակերպությունների հետ.

7) իր լիազորությունների սահմաններում Աշխատակազմի գործերի կառավարման վարչության հետ համատեղ իրականացնում է գնումների իրականացման գործընթացները.

8) օրենսդրությամբ սահմանված կարգով աջակցում է Նախարարության ակտիվների և պարտավորությունների գույքագրման աշխատանքներին.